

ընդհանուր թերութիւնը: Հետաքրքրաշարժ կը զսնեմ ընթերցափրաց և օգտակար հետեւելութ:

« Վասն ի վերայ ջրին գնալոյ՝ Եթէ կամիցիս գետ անցանել և ի վերայ ջուրցն « գնալ, որպէս ի վերայ քամակի, որ ոչ « թացցի ոտքը ի ջուրց, շինել տուր երկու « խարովու ի փայտէ, թանձր և ամուր, « ի ներքն ծակտիք, և ի վերան կաշու « տեղն, անարտ կաշի մի, որ ջուրն « բնաւ չ'անցանի ի ներսի կողմ... Եւ « երկու զարպութիւն ի յոտիցդ տակն պինդ « և ամուր կապէ, որ բնաւ չի խաղայ ի « ներքոյ ոտքից, և առ երկայն նոյնակ մի և գնայ « ի վերայ ջրին և ի վերայ գետերոյն « անցու անձեւով, զի ոչ թողու օդն, որ « ի մէջ աշխատակած ծակոցն կայ, միսիլ « ի ջուրն, և ձոյն ի ձեռինի զծանրու « բութիւն յինքն առնու և այնպէս թիթէ « գնաս ի վերայ ջրոյն որպէս ի ցամացիք: « Եւ զայս բազում անզամ փորձեալ են « ի յանցու և ի հունս գետոց: Եւ թէ ջուրն « սակաւ մի խորին լինի և խաղադ կամ « կանգնած, այլ հանգիստ գնան ի վերայ»:

Այսպէս կ'ուսուցանէ պտուղները անկուտ ընկելու արհեստը: « Չտնկեալ ծառոցն « ճիւղըն, եւս առաւել զիսաղողին, զայն « ճիւղն, որ զպատողն ունի՝ ճնեղեալ հան « զմիջի ծուծն և կրկին միատեղ կապէ: « Երբ կանաչի և պտուղ տայ, պտուղն « առանց կափ լինի: Եւ զորին որ տնկես « նոյնպէս արա, զծուծն հան և տնկէ, « խաղողն առանց կուտ լինի: Եւ թէ կա: « միցիս ի մի որթոյն զոյնզգոյն խաղող « լինել նա՝ ժողովէ զսպիտակ և զկարմիր « և զսեւ և զայլ ցեղ խաղողի կոտերն, և « զուռն ճնեղեալ ի ծծի տեղիքն զկտերն « և կապէ և տնկէ, նա բերէ զոյնզգոյն « խաղող, կարմիր, սպիտակ, զինչ զայն « կտէ որ զտեալ են, և զայս առնեն « յերկիրն ֆրանկաց և փորձի է»:

« Եթէ կամիցիս պահել զմիրգըն, որ « մայ տարի մի անապական, համն և « հոտն ի ճաշակելն, զմերութիւն և զսեխն, « զիննծորն, զտանձն, զխաղողն, զայս-

« պիսիցս այսպէս արա: Ա՛ռ զիազդողն, « և քանիցու որ ի շուր տեղիս դիր, և « յետոյ սև ձիւթիւ զկողի ծայրերն ամ « բացու, որպէս զկոնճակ, փակու յինքն և « կախեան ի փայտի, ի կախ մալով ի « պաղ տեղիս՝ նա մայ և դիմանայ մինչ « ի բոլոր տարին: Եւ զմերութիւն և զսեխն « զի՞ր ի մէջ անուշ շիրայի փշեր մի, « շիրան քաղցր լինի և նոր, թէ ոչ, թէ « թիթու կամ զինէհամ լինի, նա թթու և « գինի հոտ զայ ի նմանէ, այլ քաղցր « լինի շիրայն և այնպէս արա, երբ հաւ « նսու ի շիրայն և պահէ ի պաղ տեղիս, « մինչեւ ի տարի մի մայ ստուգիւ»:

Ո. Կ.

## ՆԻՒԹԵՐ ՊՈՒԼԿՈՐԱՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԱՊՐՈՅ ՅԵԼԵՊԻ (1620 - 1677. -)

Ապրոյ Զէլէպի նշանաւոր զէմբ մը եղած է 17րդ դարու հայ կեանքին մէջ, մեծահարուստ ու մեծասիրտ, քարեպաշտ և զզասէր մը: Ան մէծ չափով օգտակար եղած է հայութեան, միշտ ծածուկ կերպով մասնակցելով անոր բոլոր կարեւոր խնդիրներուն:

Ապրոյի նախահարց եղած են Անիէն կարին փախչող Աստուածատուրի բազրատունի զաւակները Ասլան և Ալփիար բազրատունիները: 1521ին այս երկու եղբայրները փոխազդուեցան Պելկրատ՝ Սկրապիոյ Մայրաքաղաքը: Ասլան բազրատունի ժառանգներուն մասին ոչինչ զիտենց: Ինքն ամուսնացած էր թէ ոչ, քան մը չենց զիտեր, իսկ Ալփիար բազրատունի ամուսնացաւ և ունեցաւ տղայ մը, Ղօնա Մուրաստ խան Պելկրատոցի: Ղօնա Մուրաստ ամուսնացաւ Եահրիտանի ալուն ազնուական զերգաստանէ հայունիի մը հետ: Առանց ունեցան երկու որդի, Պելկրատ Պելկրատոցի՝ որ վազահաս մեռաւ,

և Արքահամ Պելկրատցի (1626-21ին ա-  
մուսնացաւ ազնուական հայուհեի մը հետ):  
Այս Կէտը մեզի ենթաղրել կու տայ, որ  
Պելկրատ Հայոց կողմէ յաճախուած տեղ  
մ'էր և ունէր կարեւոր Հայ գաղութ մը,  
որ սակայն այժմ անհետացած է: Պելկրատի  
1500ական թռավականներուն զաղութին  
նոխութեան վկայ է Բագրատունեաց Հռն  
հաստատուիր և ունոնց ամուսնութիւննե-  
րը: Զմիւնիոյ Հայոց Առանորդարանը  
գտնուող յիշատակարանի մը մէջ կը յիշուի  
Ապրո Էփէնսափի, Հայրն Ալփիար 1632  
թռավականին յութիւն կ'երթայ յիշուա-  
զիմ: » (Սիմեկ Գարամանանի Տարեցոյ 1923, էջ 94): Անշուշտ ճիշտ չէ այս.  
Ապրոյ պապն էր Ապրոյի, իսկ Ապրոյի  
Հայրն էր Ղօճա Մուրատ խան Պելկրատ-  
ցի:

Վենետիկի Միսիթարեանց մօտ կայ ձե-  
ռապիր Աստուածաշռւնչ մը (թիւ 1), որուն  
յիշատակարանը թանկազին նշխար մ'է  
Ապրոյ Զէլէպիի կենսագրութեան, ստորեւ  
կ'արտազրեմ ամբողջութեամբ.

« Փառը ամենասուրբ երրորդութեան հօր  
և կ որդոյ և հոգոյն Սրբոյ այժմ և միշտ  
և յափտեանս: Արդ ցանկացող եղեալ  
« այս նոցենուած մատենին, որ անուամբ  
և Աստուածաշռւնչ յորդքաւալ է ի Հարցն  
« սրբոց, ի զամենայն ինչ ունին ներս ար-  
« րամադրեալ է ի ծոց իւր. ի սկզբանէ  
« ստեղծմանէ արարածոյ մինչ ցմիւն ան-  
« գամ գալուստ տեսնու:

« Վասն եռափափաց սիրով տենչացեալ  
« այրո այս բարեպաշտ և Աստուածասէր  
« Պէլզրատցի Արքահամ Զէլէպի, որ ունէր  
« նախնականարար ի սրտի իւրում զջեր-  
« մեռանդ Ռատումասիրութիւն առ Աս-  
« տուածային զիրս, և փիլիսոփայական  
« արհեստից հմուտ: մինչ զի յաւուրս յայս  
« ոչ որ զուա համեմատ սմա ի դրամա-  
« սիկս մեզ հայասիս ազանցն և ունէր  
« լովզ զուսումն Աստուածաշռւնչ տառից  
« զնոնց և զնորոց Նիրա արմատ զիեալ  
« յիւրումն սրտի Սենեկին և արագ ի պա-  
« տասխանի ամենայնի, որ ինդէք զրանն.  
« բայց զսա եւս շատացաւ ի յարդար

« վաստակոց իւրոց. ով որ հանդիպիր սմա  
« կարդալով աւրինակեռով՝ յիշեցէր ի  
« մաքրափայլ յաղաթս Զեր զնայրե իմ  
« զմահուկի ուայմուրաս խանե: » (Ծնդ-  
գծումը մերն է, շեշտելու համար ցիշ վերը  
յիշուած Զմիւնիոյ Հայոց Առաջնոր-  
դարանի յիշատակարանին մէջի սխալը):  
« Զմայրն իմ Եսարիտանի և առ Աստուած  
« հանգուցեալ մանուկ տիօց զեղրայրն իմ  
« « Պիտրոս և զվայիշագեղ զնորափիթ  
« հարազա զորդին իմ զԱրագին Զէլէ-  
« պին և զմաթուսաղան և զամենայն ար-  
« եան մերձաւորն» և որը յիշեց՝ յիշեալ  
« լիշեց ի միւս անգամ զալստեան ըրիս-  
« տոսի Աստուծոյ ամէն: »:

Աստուածաշռւնչը գրուած է 1656ին,  
Լէնցի (Լէհաստացի) Յովաննէս դպրէն.  
(Ցուցակ Վենետիկի հետագաց, էջ 80 Ա-  
Հատոր. Ասրդիսնէս Պարզ է թէ ուրիշ  
փաստերու հարկ չկայ հաստատելու հա-  
մար, թէ սիսալ է մինչև հիմայ ամէն տեղ  
արտայայտուած այն կարծիքը՝ թէ Ապրոյ  
զաւակն էր Ալփիարի (այսինքն իր պա-  
պուն): Ալսէ զատ Ապրոյ ունեցած էր  
վազամեռիկ եղբայր մը: Սոյն յիշատա-  
կարանին մէջ Ապրոյ կը ներկայացուի  
նաեւ իրը զրաքը և եկեղեցաւը: Ան լոկ  
շուկայիկ «նշանաւոր» մը չէ, այլ գիտա-  
կից և կարող մէկը, որ երջանկութիւնն  
ունեցած է հարստութեան բարիցներն ալ  
վայլելու:

Ապրոյ 1632ին, ըստ այլոց 1634ին,  
այսինքն 11-13 տարեկան եղած ատեն  
ուխտի զացած է Երուսաղէմ: Անշուշտ  
չէր ամուսնացած այն ատեն: Ուխտէն  
դարձին հաւանարար Ապրոյ Զէլէպի ընդ-  
գրկեց վաճառականական ասպարէզը: Ան  
խելացի էր, ուշիմ և ճարպիկ միանգա-  
մայն զեհանձն և առատաձեռն. իր այս  
յատկութիւններն էին որ զինք համբաւա-  
ւոր ըրին:

« Արքահամ, այր լայնախորհուրդ, ժա-  
« մանեալ յաստիճան տանուտերական,  
« բան զիր նախնիսն առաւել եւս հետա-  
« մուտ լին բարի համբաւոց և ըստ նախ-  
« նական կրթութեան և մոտացն առատու-

«թեան և եւս բարգաւաճի օր ըստ օրէ,  
«սիրելի եղեալ յաշը ամենացըն»:

Այսպէս զրուտալից տողերով կը զրէ  
իզմիրի Հայոց Առաջնորդարանի յիշատա-  
կարանը, որ Գանտիայէն Գարեգին Վ.,  
Արքունի հրատարակած է Արմ. Գարամա-  
նեանի տարեցընին մէջ (1923, էջ 94):

Տիար Արշակ Ալպօյեանեան ալ իր  
մրցանակաւոր ձեռագիր Ռումելիի հայոց  
Պատմութեան մէջ խօսելով Ապրոյի վրայ  
կ'ըսէ. «Ապրօ Զէլէպի եղան է Ռումելիի  
հայոց եկեղեցիներուն համար այն՝ ինչ որ  
եղած է Գազազ միմրայ կ. Պուսոյ և շըր-  
ջակալից եկեղեցիներուն համար»:

Ան շափազանց սիրելի կ'ըլւայ «հրո-  
չակառը Հիւսէյին պաշախի, որ զօրա-  
գլուխն էր զօրաց պատերազմականաց ընդ  
կրէտացիս»: «Այս յորժամ ի կրէտէ էր ընդ  
«բանակին Յսմանցցոց արցոնին վաճա-  
«ասկան գոլով հիւսէյին փաշային յառա-  
«նույն նոցա զկզիցին, նարտարաբան վի-  
«նարանութեամբ առնու զեկեղեցին մի-  
«վասն հայոց զոր վասն ամենայն թշնամի-  
«գանձօթիցն քայլայեալ էր. իրովք իսկ  
«ընշիւն նորոգէ. պատրաստեալ և զա-  
«մենայն զարդ նոցա» (Զմիւսիոյ յիշ  
«շատակարան»):

«Ան կրեսէի զրաւման միջոցին, այս-  
ինքն հիմքի 1056 և Քր. ի 1646 թուին.  
օսման բանակին մէջ վաճառական ըլլա-  
լով՝ իր ճարտարախօսութեամբ յաջողած  
է յաղթական բանակին հրամանատարէն  
քաղաքին մէջ եկեղեցի մ'առնել, անշոշտ  
իր բարուց ծառայութեան իրը վարձք,  
զոր վերանորոգել տալով և շուրջ գտնուած  
առներն ալ զնելով իրը կալուած եկե-  
ղեցւոյն յատկացւցած է»: (Գարեգին Վ.  
Արքունի, Գարամանեան տարեցըն 1923,  
էջ 93: Այս մասին տես նաև 1903 թ-  
դարձակ Օրացոյց Հիւսնդանոյի):

Այսպէս Ապրոյ 1646ին տուաւ եկեղեցի  
մը կրէտէի Հայոց, որուն կալուածներ ալ  
կու տայ:

«1660ին թուլիս 20ին վերոգրեալ (Ս.  
Նիկողոս և Ս. Արքովս ի կ. Պուսա) զոյզ  
եկեղեցիները կ'այրին» սոյն մէծ կրակէն՝

որմէ կ'ազատի Ս. Աստուածածնի եկեղե-  
ցին: Ապրոյ Զէլէպի կ'ուզէ այս եկեղե-  
ցիները չինել, բայց առեւրական պատ-  
ճառաւ Մոռա Կ'երթայ Քէհիա Վէլի փա-  
չայի հետ: Երթալէն առաջ Ապրոյ կ'ուզէ  
Ս. Արքի եկեղեցւոյն տեղը զնել և վե-  
րաշննել, բայց առենուան Խաչատոր կա-  
թողիկոսը ժողովուրդին հետ դէմ կը կե-  
նայ, բայց վերջապէս Ապրոյ կը յաջողի  
զնել և երմիւա Զէլէպի (Քէոմիւրճեան)  
շինել կու տայ Ս. Նիկողոյոս եկեղեցին:  
Հայերը, յոյները և լատինները առանց  
պետական հրամանի եկեղեցին կը շինեն,  
բայց Քէօրքիւկի Վէզիրին մահուան և ա-  
նոր որդուոյն յաշորդելուն վրայ հայց կը  
գախնան գործը շարունակիւ: Ապրոյ Մօ-  
ռայէն անմիջապէս Երեմիայուն կը զրէ  
խորհուրդ տալով որ եկեղեցւոյն բերեց  
խորանները բանդելով գպրոցի վերածէ,  
որպէս զի թուրքերը չկործանեն ամրոցի  
շինը: Ապրոյ այդ մէջոցին Մօռայէն կ'անցնի  
իտինէ:

Այդ միջոցին մի ոմն Ղազար Պատրիկ  
(Ղազար կամ Եղիազար Պատրիարքը ար-  
քաօքը) կ'երթայ ու թուրքերուն կը մատնէ  
հայոց առանց հրամանի եկեղեցին շինել-  
նին (1662). այս միջոցներուն Սուլթան  
Մէհմէտ Դ. և Վէզիր Ազիմին Պոլիս կու  
գան Զատկի օրը, և նոր կիրակիին մարդ  
զկելով Եկեղեցւոյն դարանները կնքել  
կու տան: Ճամ օր յետոյ արգէն նայիպ  
չափոշ անուն պաշտօնեան կու զայ և  
Երեմիայի քանդել չկրցած խորանները  
և պատկերները մի առ մի կ'արձանագրէ  
ու վէզիրին կ'ուզարկէ. և երբ Շամազանի  
20 օրերը կ'անցնին՝ այս անգամ թուրք  
զինուորները զալով՝ ծեծի տակ և բանու-  
թեամբ կը ստիպեն հայց և յոյն որ  
բանդեն իրենց իսկ ձեռակերտը. և ար-  
դարեւ երեք օր վերջը միայն աւերակաները  
կը մնան: Այսէ վերջ կը ձերբակալուին  
11 յոյն և 4 հայ՝ իրը եկեղեցւոյն շինող-  
ները, յոյնց իրը նահատակներ անարտունչ  
կը կրն իրենց սահմանուած պատիժին  
բաժինը. բայց հայց միշտ կառավարչա-  
տուն կը զիմեն՝ ցոյցերով իրենցիներուն

ազատ արձակուիլը պահանջելով։ Անոնց մասնաւոր թշնամութեամբ առցուն և ուր ըրհներէն գրգռուած կ'ամրաստանն Էն Ապրոյ Զէլէպին, որ անոնց ձեռքէն ազատելու համար՝ Ցէֆթերտարդին մօտ ապաստանած էր։ Հայր կը պահանջն որ իրենցինները ազատ արձակելով միայն Ապրոյ զիլատուի։ Պարզ է թէ Ապրոյ մազի չափ չի նեղուիր այս բաներէն, վերջապէս վէզդրը ամէնորիայ տրտունջներէն ձանձրացած հրաման կ'ընէ, թէ այն հայը որ այս խնդրոյն համար պաշտօնաատոն գայ՝ բռնեն ու բանտ դրկեն։ Պահակներն ալ ներսը դուրսը բռնած հայեր կը բանտարկէին ու կը ծեծէին։

Վերջապէս թագաւորին հրամանաւ խորհուրդ կը գումարուի. Խւլիմաներուն իսկ խորհրդով Հիւսնիրա պետը կը զիլատուի միայն, ազատ արձակել տալով չորս հայերը. բայց մոնենատիկի միջցաւ ալ կը ծանուցուի որ ամէն որ ամէն ազգէ կրնայ զնել այդ հողամասը. և հրեայ մը կը զնէ և բանջարանցի կը վերածէ. (ասիկա ցաղուած է երեմիա Զէլէպի վեօմիւրճեանի 2850 տողնոց Երկրորդ ժամանակագրութենէն 1660—1662—1666 և 1672 Ցարիներուն «Հմտութիւն կ. Պօլսոց «Փէյ Օղլուի» հայոց գերեզմանատանը», Հանգէս Ամօրեայ 1911 օգոստոս, էջ 474. — Գրեց Հ. Գ. Վ. Գալիմքերեան):

Վերը յիշուած մնձ հրանքը, որուն ընդ թացքին այրեցան եկեղեցիները, տեղի ու նեցան 1660 յուլիս 14ին, անոնց էին Զիւլի համամի Ա. Մարգիս և Հիսար Տիպի Ա. Նկողովոն եկեղեցիները։ Ապրոյ շինել տուած է նաեւ Իսակիմիայի, Սիլիվրիի, Տիմօթիցայ, Մանալցի, Ֆիլիպէի եկեղեցիները։ Խնճը նուիրած է նաև իտարնէի գերեզմանատունը։

(Հարունակելի)

8. ՔԻՒՐԵՏԱԿ

Ողբա աշխարհ և ազգ Հայաստանեայց, որ երբեմն համանման երկնի լուսապայծառ աստեղ լցնալ, այսօր նսմացեալ կրկնի խաւարաւ, մնաց ասեմ և նեղչացն ամպավք ծածկեալ։

Յուն. Վ. Երանեասի

## ԼԵԶՈՒԱԳԻՑԱՑՈՒԱՆ

### Հ Ա Յ Ե Բ Ի Ն Ն Ո Ր Բ Ա Ռ Ե Բ

ԳԻՐԻ ԹՎ ԹՈՅՏԻ Մէջ

(ապ. Թէֆլիս 1901)

#### 1. Ազտին

Զի ազտին որ ինձ հասեալ է ի տերանց։ Ազտիհե ձեր և փառաւորութիւնն (էջ 170—171)։

Այս բարը առաջին անգամ Հ. Ակենեան Հիւ 1909, 141 ժանօթացնելով՝ մեկնեց պրո. azadeskari «ազատ, ինքնիշխան»։ Նորայր՝ անդ, 220 մեկնեց «չուրց, փառաւորութիւն», իրը ասոր. կողդի «փառաւորեցաւ», կղդահի «փառաւորեալ»։ Ըստ իս պէլ. Աձձենի բառն է, որ կը նշանակէ «ազատութիւն, ազնուականութիւն»։

#### 2. Ալթունին

Յետ այսորիկ տեսանէր նոյն ծերն զթորնազիս յանկեան մի կանկնեալ և սկացեալ իրրե զաթունի, որ զրազանիան այրէ (էջ 515, նոյնը նաեւ Միիս. ասոր. էջ 209)։

Արար. atûn «heney» բառն է (տես Գամոսս, թրբ. թրգմ. Գ. 589, 605)։ Զարմանալի է որ Գարամաննեանի բառարանը գիտէ այս բառը՝ «հաց եփելու փուռ» նշանակութեամբ։

Այս մի և նոյն բառը ունինց նաեւ Անկ. զիրը էին կտ. 335. Եւ զնացեալ հանդիպեցաւ այրոյն, և ետես զի ի սովոյն մաշեալ էր և եղեալ զաթունի։ — Հրատարակիչը ծանօթութեան մէջ կը մեկնէ «զուցէ թրց. զանը վախի», որ ինչպէս նախորդ վկայութենէն կ'երեւայ, ճիշտ չէ։

#### 3. Ալմջիւնան

Եւ Սիրգիս՝ որում Բարգէն անուն էր, Արդիշոյան խուժիկ, և Շոշարի շահաւա-